



**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(փոփոխություններով)**

ք. Երևան

Handwritten signature

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ
2. Գաղտնիությունը
3. Փաստաթղթերի ներկայացման կարգը
4. Փաստաթղթերի առաքումը և հանձնումը
5. Գործը լսելու լեզուն
6. Գործի քննության ժամկետը
7. Կիրառելի իրավունքը
8. Արբիտրաժային վարույթի սկիզբը
9. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը
10. Արբիտրաժային ծախսերը
11. Գործի նախապատրաստումը արբիտրաժային վարույթին
12. Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը
13. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը
14. Արբիտրի, փորձագետի և թարգմանչի բացարկը
15. Արբիտրի իրավասությունների դադարումը
16. Արբիտրաժային տրիբունալի փոփոխությունը
17. Գործի նախապատրաստումը
18. Գործի լումները և փաստաթղթային վարույթը
19. Բանավոր քննություն
20. Բանավոր քննության նիստի արձանագրումը
21. Բանավոր քննության արձանագրությունը
22. Գործի վարույթը գրավոր նյութերի հիման վրա
23. Կողմերի մասնակցությունը
24. Հայցի ապահովման միջոցները
25. Ապացույցները
26. Երրորդ անձանց մասնակցությունը
27. Քննության հետաձգումը և վարույթի կասեցումը
28. Արբիտրաժային վճիռ
29. Վճռի հրապարակումը
30. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը
31. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը
32. Հաշտության համաձայնություն
33. Վճռի կատարումը
34. Արբիտրաժի ավարտը:

Հավելված 1. «Արբիտրաժային ծախսերի և հոնորարների մասին կարգ»

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանի բանկերի միության (այսուհետ՝ ՀԲՄ) «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը (այսուհետ՝ Ֆինանսական արբիտրաժ), ՀԲՄ կողմից հիմնարկի կարգավիճակով ստեղծված, ինքնուրույն, մշտապես գործող Արբիտրաժ է, որը գործում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին, Ֆինանսական արբիտրաժի կանոնադրությանը, սույն Կանոնակարգին (այսուհետ՝ Կանոնակարգ) և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2 Ֆինանսական արբիտրաժին կարող է դիմել արբիտրաժային համաձայնության կողմ հանդիսացող ցանկացած անձ:

1.3 Ֆինանսական արբիտրաժը բավարարում է արբիտրաժային վարույթ սկսելու հայցվորի խնդրանքն այն դեպքում, երբ կողմերի միջև առկա է գրավոր համաձայնություն առևտրային հարաբերություններից բխող տվյալ վեճը Ֆինանսական արբիտրաժին հանձնելու մասին և հայցը ներկայացվել է Կանոնակարգով սահմանված պայմանների պահպանմամբ:

1.4 Արբիտրաժային տրիբունալը վեճը քննում է Օրենքով և Կանոնակարգով սահմանված կարգով: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի արբիտրաժային համաձայնությամբ, ապա վեճը քննելիս որպես կանոն կիրառվում են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները: Կողմերի համաձայնությամբ, չկարգավորված հարցերը քննելիս արբիտրաժային տրիբունալը հետևելով Օրենքի դրույթներին, վարում է քննությունը այնպիսի եղանակով, որը նա գտնում է նպատակահարմար՝ պահպանելով հավասար վերաբերմունք կողմերի նկատմամբ և հնարավորություն տալով կողմերից յուրաքանչյուրին հավասարապես պաշտպանելու իրենց շահերը:

1.5 Ֆինանսական արբիտրաժի գտնվելու և լուծմանն անցկացնելու վայրը քաղաք Երևանն է: Արբիտրաժային տրիբունալը, անհրաժեշտության դեպքում, կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է լուծմանն անցկացնել այլ վայրում: Կողմերի ցանկությամբ լուծմանն անցկացման այլ վայր սահմանելու դեպքում լուծման վայրի տեղափոխման հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը կատարվում, իսկ այնուհետև բաշխվում են կողմերի միջև Կանոնակարգին համապատասխան:

2. Գաղտնիությունը

2.1 Ֆինանսական արբիտրաժը, արբիտրները և Ֆինանսական արբիտրաժի նախագահն ու աշխատակիցները պարտավոր են չհրապարակել Ֆինանսական արբիտրաժին հանձնված վեճերի մասին իրենց հայտնի դարձած որևէ տեղեկություն, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել այլ անձանց:

2.2 Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, դատարանի որոշմամբ կամ կողմերի համաձայնությամբ, ապա բոլոր արբիտրաժային վարույթները գաղտնի են և դռնփակ, և ոչ մի փաստաթուղթ կամ ներկայացված այլ ապացույց կամ արբիտրաժային լուծման ժամանակ երբևէ կատարված հայտարարություն չի կարող տրամադրվել այլ անձանց կամ որևէ դատարանի կամ այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունները տրամադրվում են դատարանի որոշմամբ կամ անհրաժեշտ են դատարանում վարույթի շրջանակներում՝ արբիտրաժի վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ հայտարարման համար:

3. Փաստաթղթերի ներկայացման կարգը

3.1 Արբիտրաժային վարույթին վերաբերող բոլոր փաստաթղթերը կողմերը պետք է ներկայացնեն Ֆինանսական արբիտրաժին 1/մեկ/ օրինակից, բացառությամբ հայցադիմումների, որոնք ներկայացվում են պատասխանողների թվին համապատասխան քանակին գումարած մեկ օրինակից: Ֆինանսական արբիտրաժին ներկայցվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հայերեն լեզվով: Արբիտրաժային տրիբունալի համաձայնությամբ փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև կողմերի համար ընդունելի այլ լեզվով:

4. Փաստաթղթերի առաքումը և հանձնումը

4.1 Արբիտրաժային վարույթի հետ կապված բոլոր փաստաթղթերը կողմերին առաքվում են կողմերի նշած հասցեներով:

4.2 Հասցեի փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են այդ մասին անմիջապես հաղորդել Ֆինանսական արբիտրաժին:

4.3 Հայցադիմումները, հայցի վերաբերյալ բացատրությունները, հայցադիմումի պատասխանները, ծանուցագրերը, արբիտրաժային վճիռները, որոշումները և այլ փաստաթղթերը առաքվում են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Այդ փաստաթղթերը կարող են փոխանցվել նաև հեռագրով, ֆաքսով՝ կողմերի նշած հեռախոսահամարներով, էլեկտրոնային (ինտերնետային) հասցեներով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով, որոնք թույլ են տալիս որոշելու առաքողի և ստացողի ինքնությունը: Վերը նշված բոլոր փաստաթղթերը կարող են նաև փոխանցվել կամ հանձնվել առձեռն, ինչը պետք է հավաստվի ստացման վերաբերյալ հասցեատիրոջ բնօրինակ մակագրությամբ:

4.4 Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե դա հասցված է

անձամբ հասցեատիրոջը կամ նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր կամ մշտական բնակության վայր կամ փոստային հասցեով: Այն դեպքում, երբ ողջամիտ հարցումներ կատարելուց հետո նշված հասցեներից ոչ մեկը չի կարող պարզվել, գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե դա ուղարկված է հասցեատիրոջ՝ ուղարկողին հայտնի վերջին գործունեության վայր, մշտական բնակության կամ հաշվառման վայրի կամ փոստային վերջին հայտնի հասցեով՝ պատվիրված նամակով կամ նշված գրավոր հաղորդակցությունն հասցնելու փորձի գրանցումն ապահովող որևէ այլ ձևով:

5. Գործը լսելու լեզուն

5.1 Գործը լսվում է հայերեն լեզվով:

5.2 Եթե կողմը չի տիրապետում գործը լսելու լեզվին, ապա արբիտրաժային տրիբունալը կողմի խնդրանքով և վերջինիս հաշվին կարող է ապահովել նրան թարգմանչական ծառայություններով:

6. Գործի քննության ժամկետը

6.1 Արբիտրաժային տրիբունալը որպես կանոն գործի վարույթն ավարտում է արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո մեկամսյա ժամկետում:

6.2 Բացառիկ դեպքերում, հիմնավոր պատճառներով արբիտրաժային տրիբունալը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է ողջամիտ ժամկետով երկարաձգել Կանոնակարգի 6.1 կետում նշված ժամկետը:

7. Կիրառելի իրավունքը

7.1 Արբիտրաժային տրիբունալը վեճերը քննում է ՀՀ նյութական իրավունքի նորմերի կիրառմամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի արբիտրաժային համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ՝ ղեկավարվելով արդարության ընդհանուր սկզբունքներով, սակայն, ամեն դեպքում, չհակասելով Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

7.2 Կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում արբիտրաժային տրիբունալը կարող է կիրառել նաև օտարերկրյա իրավունք:

8. Արբիտրաժային վարույթի սկիզբը

8.1 Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված վեճը ֆինանսական արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

9. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը

9.1 Հայցադիմումը պետք է պարունակի.

- ա) Ֆինանսական արբիտրաժի անվանումը,
- բ) հղում արբիտրաժային համաձայնությանը, որի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը պետք է ներկայացվի հայցադիմումին կից,
- գ) Կողմերի և նրանց ներկայացուցիչների անունները, անվանումները, փոստային հասցեները, ինչպես նաև հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարները և էլ. փոստի հասցեները (եթե վերջիններս առկա են),
- դ) այն փաստական հանգամանքների շարադրումը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.
- ե) հայցվորի պահանջների նկարագրությունը՝ հղում կատարելով օրենքի, այլ իրավական ակտերի և պայմանագրի դրույթների վրա, որոնցով հայցվորը հիմնավորում է իր հայցապահանջները,
- զ) հայցապահանջները հիմնավորող ապացույցները, որոնք հաստատում են այդ հանգամանքները,
- է) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման.
- ը) սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում արբիտրի անունը և ազգանունը, որին ընտրել է հայցվորը կամ միջնորդություն այն մասին, որ արբիտրին նշանակի ՀԲՄ նախագահը,
- թ) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները:

9.2 Հայցադիմումին կից ներկայացվում է նաև Կանոնակարգով սահմանված կարգով հաշվարկված արբիտրաժային վճարների վճարումը հավաստող փաստաթղթերը:

9.3 Հայցադիմումը պետք է ստորագրված լինի հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից՝ կից ներկայացնելով ներկայացուցչի լիազորագիրը:

9.4 Հաստատելով, որ հայցադիմումը ներկայացվել է Ֆինանսական արբիտրաժին Կանոնակարգի 9-րդ գլխի պահանջների խախտմամբ, Ֆինանսական արբիտրաժն առաջարկում է հայցվորին ողջամիտ ժամկետում վերացնելու հայցադիմումի մեջ տեղ գտած թերությունները: Եթե հայցվորը պնդում է ներկայացված հայցադիմումի շրջանակներում քննության իրականացումը, ապա արբիտրաժային վարույթը սկսվում է տվյալ հայցադիմումի հիման վրա, որի հետագա ընթացքը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

10. Արբիտրաժային ծախսերը

10.1 Արբիտրաժային ծախսերը ներառում են. արբիտրաժային վճարը, գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը: Ֆինանսական արբիտրաժը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը կարող է արբիտրաժային վարույթի ընթացքում որոշում կայացնել լրացուցիչ ծախսերը հոգալու համար հավելյալ գումարների վճարման վերաբերյալ, որը ենթակա է վճարման հայցվորի կամ պատասխանողի կողմից՝ կախված այն հանգամանքից, թե այդ ծախսերի կատարման անհրաժեշտությունը որ կողմի կողմից կատարված դատավարական գործողությունների հետևանքով է առաջացել: Արբիտրաժային լրացուցիչ գործողությունները, որոնցով պայմանավորված է սույն կետում նշված վճարի անհրաժեշտությունը, չեն կատարվի մինչև դրա վճարումը, իսկ արբիտրաժային վարույթը կշարունակվի առանց նշված գործողությունների իրականացման:

10.2 Արբիտրաժային ծախսերի չափը, վճարման կարգը, ծախսերի բաշխումը կողմերի միջև, ինչպես նաև արբիտրաժային վարույթի այլ ծախսերի վճարման կարգը, սահմանվում է Կանոնակարգի թիվ 1 հավելված հանդիսացող «Արբիտրաժային ծախսերի և հոնորարների մասին» կարգով, որը հանդիսանում է Կանոնակարգի անբաժանելի մասը:

11. Գործի նախապատրաստումը արբիտրաժային վարույթին

11.1 Պատասխանողը հայցադիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում կարող է Ֆինանսական արբիտրաժին ուղարկել հայցադիմումի պատասխան՝ շարադրելով հայցվորի կողմից գործը Ֆինանսական արբիտրաժին հանձնելու վերաբերյալ իր տեսակետը և/կամ ներկայացված պահանջների վերաբերյալ իր դիրքորոշումը:

11.2 Հայցադիմումի պատասխանում պատասխանողը պարտավոր է հանգամանորեն շարադրել, թե փաստական և իրավական հանգամանքներից որոնք է ընդունում և որոնց դեմ է առարկում և ինչ հիմքերով է դրանց դեմ առարկում:

11.3 Եթե պատասխանողը ցանկանում է առարկություններ ներկայացնել արբիտրաժային համաձայնության վավերության կամ կիրառելի լինելու վերաբերյալ, ապա վերջինս պարտավոր է այդ մասին շարադրել Ֆինանսական արբիտրաժին ուղղված իր պատասխանի մեջ՝ միաժամանակ նշելով հիմնավորումները:

11.4 Հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով պատասխանողը հիմնավորում է իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

11.5 Հայցադիմումի պատասխանի մեջ պատասխանողը պարտավոր է նշել իր կարծիքը ֆինանսական արբիտրաժի նախագահի կողմից միանձնյա վեճը քննելու վերաբերյալ, եթե վեճը Կանոնակարգի համաձայն քննվելու է վերջինիս կողմից կամ էլ նշել իր կողմից ընտրված արբիտրի անունը, ազգանունը կամ խնդրել, որպեսզի արբիտրին իր փոխարեն նշանակի ՀԲՄ նախագահը:

11.6 Հայցադիմումի պատասխանի փոխարեն պատասխանողը կարող է Ֆինանսական արբիտրաժին ներկայացնել հակընդդեմ հայցադիմում: Հակընդդեմ հայցադիմումը պետք է ներկայացվի հայցադիմումի ներկայացման համար Կանոնակարգով սահմանված կարգով:

11.7 Եթե պատասխանողի կողմից ներկայացվում է հակընդդեմ հայցադիմում, ապա հակընդդեմ հայցադիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում հայցվորը արբիտրաժային տրիբունալին է ներկայացնում հակընդդեմ հայցադիմումի պատասխան, որը պետք է ներառի առարկություններ հակընդդեմ հայցապահանջների դեմ՝ հայցային պահանջների դեմ առարկություններ բերելու համար նախատեսված կարգով: Հակընդդեմ հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հայցվորը հիմնավորում է իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

11.8 Սահմանված ժամկետներում կողմերի կողմից համապատասխան դիքորոշում չներկայացնելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ Ֆինանսական արբիտրաժի կողմից վարույթը Կանոնակարգի համաձայն շարունակելու համար:

12. Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը

12.1 Հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի առարկան կամ հիմքերը, նվազեցնելու կամ ավելացնելու հայցային պահանջների չափը մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը: Ընդ որում, հայցի հիմքն ու առարկան չեն կարող փոփոխվել այնպես, որ հայցապահանջները դուրս գան արբիտրաժային համաձայնության շրջանակներից:

12.2 Հայցային պահանջներն ավելացնելու դեպքում հայցվորը պարտավոր է հայցային պահանջներն ավելացնելու վերաբերյալ դիմումին կից ներկայացնել հայցապահանջների ավելացված մասին համապատասխանող արբիտրաժային վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը չներկայացնելու դեպքում դիմումը վերադարձվում է հայցվորին և հայցային պահանջները համարվում են չավելացված:

13. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը

13.1 Մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթային գումարի բռնագանձման պահանջներով վեճը քննող արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է միանձնյա արբիտրի կազմով, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ: Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ ցանկացած վեճ կարող է լուծվել միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից:

Այդ դեպքերում, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ, արբիտրաժային տրիբունալը նախագահող միանձնյա արբիտր է դառնում Ֆինանսական արբիտրաժի նախագահը (վերջինիս փոխարինող արբիտրը), եթե պատասխանող(ներ)ը վեճը Ֆինանսական արբիտրաժի նախագահի (վերջինիս փոխարինող արբիտրի), կողմից միանձնյա քննելու մասին ծանուցումը պատշաճ ստանալու պահից հինգ օրվա ընթացքում բացարկ չի ներկայացնում արբիտրաժային տրիբունալի նախագահողի թեկնածության դեմ:

Ֆինանսական արբիտրաժի նախագահի(վերջինիս փոխարինող արբիտրի)՝ որպես վեճը քննող միանձնյա արբիտրաժային տրիբունալի, թեկնածության դեմ բացարկ ներկայացնելու դեպքում Պատասխանողը պետք է բացարկի հետ միաժամանակ ներկայացնի նաև Ֆինանսական արբիտրաժի արբիտրների կազմից իր կողմից ընտրված արբիտրին, որը դառնում է վեճը քննող միանձնյա արբիտր: Եթե գործին մասնակցում են մեկից ավելի պատասխանողներ, ապա նրանցից

թեկուզև մեկի կողմից Ֆինանսական արբիտրաժի նախագահի (վերջինիս փոխարինող արբիտրի)՝ որպես վեճը քննող միանձնյա արբիտրաժային տրիբունալի, թեկնածության դեմ բացարկ ներկայացնելու դեպքում, Պատասխանողները պարտավոր են բացարկի հետ միաժամանակ ներկայացնել Ֆինանսական արբիտրաժի արբիտրների կազմից իրենց կողմից համատեղ ընտրված արբիտրին, որը դառնում է վեճը քննող միանձնյա արբիտր:

Եթե պատասխանող(ներ)ը առարկում է Ֆինանսական արբիտրաժի նախագահի (վերջինիս փոխարինող արբիտրի) կողմից վեճը միանձնյա քննելու դեմ, սակայն սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում չի ներկայացնում Ֆինանսական արբիտրաժի արբիտրների կազմից իր կողմից ընտրված արբիտրի անուն-ազգանունը, իսկ մի քանի պատասխանողների մասնակցությամբ գործերի դեպքում՝ պատասխանողների կողմից համատեղ ընտրված արբիտրի անուն-ազգանունը, ապա արբիտրաժային տրիբունալը ձևավորում և վեճը քննող միանձնյա արբիտրին նշանակում է ՀԲՄ նախագահը:

13.2 Կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված դեպքերում՝ մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ/ գումարի բռնագանձման պահանջներով, իսկ արբիտրաժային համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ հինգ միլիոն ՀՀ դրամը/համարեք արտարժույթը/ գերազանցող գումարներ բռնագանձելու պահանջներով, ինչպես նաև այլ պահանջներով գործերով արբիտրաժային տրիբունալը կազմավորվում է երեք արբիտրներից, որի դեպքում Կողմերից յուրաքանչյուրը Ֆինանսական արբիտրաժի արբիտրների կազմից նշանակում է մեկական արբիտր: Եթե կողմերը որպես արբիտր ընտրում են միևնույն անձին , ապա վեճը քննող արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է միանձնյա արբիտրի կազմով: Կողմերը կարող են նաև խնդրել, որ արբիտրին իրենց փոխարեն նշանակի ՀԲՄ նախագահը:

13.3 Սույն կանոնակարգի 13.2 և 13.4 կետերով նախատեսված դեպքերում եթե պատասխանողը (պատասխանողները) հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում չի ներկայացնում արբիտրի թեկնածություն, ապա վերջինիս նշանակումը կատարում է ՀԲՄ նախագահը:

13.4 Եթե գործին մասնակցում են երկու կամ ավելի հայցվորներ կամ պատասխանողներ, ապա արբիտրաժային համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ/ գումարի բռնագանձման պահանջներով արբիտրաժային տրիբունալը սույն կանոնակարգով սահմանված կարգով ձևավորվում է մեկ արբիտրի կազմով, իսկ հինգ միլիոն դրամը/համարժեք արտարժույթը/ գերազանցող գումարի բռնագանձման պահանջներով, ինչպես նաև այլ պահանջներով՝ 3/երեք/ արբիտրների կազմով, որի դեպքում հայցվորները և պատասխանողները համատեղ Ֆինանսական արբիտրաժի արբիտրների կազմից նշանակում են մեկական արբիտր, իսկ կողմերի կողմից ընտրված արբիտրները ընտրում են երրորդ արբիտրին: Եթե հայցվորները կամ պատասխանողները չեն համաձայնվում արբիտրների համատեղ նշանակման հարցում ապա նրանց փոխարեն արբիտրին նշանակում է ՀՄԲ նախագահը:

13.5 Կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված դեպքերում արբիտրաժային տրիբունալը կարող է կազմավորվել նաև 3-ից ավելի արբիտրների կազմով, սակայն արբիտրների քանակը միշտ պետք է լինի կենտ: Ընդ որում, եթե գործին մասնակցում են մի քանի հայցվորներ կամ մի քանի պատասխանողներ, ապա հայցվորների և պատասխանողների կողմից պետք է նշանակվեն հավասար թվով արբիտրներ:

Եթե արբիտրաժային տրիբունալը բաղկացած է մեկից ավելի արբիտրներից, ապա կողմերի կողմից նշանակված արբիտրները ընտրում են վերջին(կենտ թիվ ապահովելու համար) արբիտրին, իսկ համաձայնության բացակայության դեպքում վերջինիս նշանակում է ՀԲՄ նախագահը:

13.6 Եթե արբիտրաժային տրիբունալի կազմում ընդգրկվում է ֆինանսական արբիտրաժի նախագահը, ապա նա դառնում է արբիտրաժային տրիբունալի նախագահող, հակառակ դեպքում արբիտրաժային տրիբունալը նախագահող է դառնում Կողմերի նշանակած արբիտրների կողմից ընտրված կամ ՀՄԲ նախագահի կողմից նշանակված արբիտրը:

14. Արբիտրի, փորձագետի և թարգմանչի բացարկը

14.1 Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի բացարկ հայտնելու արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, մասնավորապես՝ եթե հիմքեր կան ենթադրելու, որ նրանք անձամբ ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են վարույթի ելքով: Բացարկ կարելի է հայտնել նաև այն դեպքում, եթե արբիտրը օժտված չէ կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորմամբ:

14.2 Բացարկյի մասին կողմերի գրավոր դիմումները, որոնցում շարադրված են բացարկը հիմնավորող հանգամանքները, պետք է ներկայացվեն հնգօրյա ժամկետում, այն բանից հետո, երբ կողմը տեղյակ է եղել արբիտրաժային տրիբունալի ձևավորման մասին, կամ այն բանից հետո երեքօրյա ժամկետում, երբ կողմը տեղյակ է եղել այնպիսի հանգամանքների մասին, որոնք բացարկյի հիմք կարող են հանդիսանալ:

14.3 Կանոնակարգի 14.2 կետով նախատեսված ժամկետից ուշ բացարկյի մասին հայտարարություն անելու դեպքում հայտարարությունը քննարկվում է ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում:

14.4 Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկյի հարցը որոշում են արբիտրաժային տրիբունալի մյուս անդամները: Եթե նրանք համաձայնության չեն գալիս կամ եթե բացարկը հայտնվել է միանձնյա արբիտրին, ապա բացարկյի հարցը որոշում է ՀԲՄ նախագահը:

14.5 Եթե հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկյի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարան՝ բացարկյի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

14.6 Արբիտրն իր հայեցողությամբ կարող է նաև ինքնաբացարկ հայտարարել:

14.7 Բացարկներ կարող են հայտնվել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկյի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

15. Արբիտրի իրավասությունների դադարումը

15.1 Այն դեպքում, երբ արբիտրն ի վիճակի չէ կատարելու կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառնություններն առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին:

15.2 Այն դեպքերում, երբ առկա են տարածայնություններ Կանոնակարգի 15.1 կետի հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել ք. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որի կայացրած դատական ակտը բողոքարկման ենթակա չէ:

16. Արբիտրաժային տրիբունալի փոփոխություն

16.1 Եթե արբիտրին բացարկ է հայտնվել կամ այլ պատճառներով նա չի կարող մասնակցել գործի վարույթին, ապա փոխարինող արբիտրին նշանակում է փոխարինվող արբիտրին նշանակած կողմը, իսկ եթե փոխարինվող արբիտրը նշանակվել է ՀԲՄ նախագահի կամ մյուս արբիտրների կողմից, ապա համապատասխանաբար ՀԲՄ նախագահը կամ մյուս արբիտրները:

16.2 Անհրաժեշտության դեպքում կամ հաշվի առնելով կողմերի կարծիքները փոփոխված արբիտրաժային տրիբունալը կարող է վերանայել արբիտրաժային վարույթի հետ կապված այն հարցերը, որոնք քննարկվել են նախկին բանավոր լսումների ժամանակ՝ մինչև փոխարինման կատարումը:

17. Գործի նախապատրաստումը

17.1 Արբիտրաժային տրիբունալը ստուգում է գործի նախապատրաստման վիճակը արբիտրաժային վարույթին և եթե անհրաժեշտ համարի, ձեռնարկում է լրացուցիչ միջոցներ գործի նախապատրաստման համար, մասնավորապես՝ պահանջում է կողմերից գրավոր բացատրություններ, ապացույցներ և լրացուցիչ այլ փաստաթղթեր:

17.2 Արբիտրաժային տրիբունալը գործի նախապատրաստման համար լրացուցիչ միջոցներ ձեռնարկելիս նշանակում է ողջամիտ ժամկետներ, որոնց ընթացքում պետք է իրականացվեն այդ լրացուցիչ միջոցները:

17.3 Արբիտրաժային տրիբունալը նախագահողը կարող է Ֆինանսական՝ արբիտրաժին դիմել գործի նախապատրաստման և վարույթի անցկացման հետ կապված որոշակի գործողությունների իրականացման խնդրանքով:

18. Գործի լուծմանը և փաստաթղթային վարույթը

18.1 Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա Արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում գործի վարույթն իրականացնել կամ բանավոր լուծմանը կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Այնուամենայնիվ, արբիտրաժային տրիբունալը պարտավոր է իրականացնել բանավոր լուծման արբիտրաժային վարույթի համապատասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լուծմանը:

19. Բանավոր քննություն

19.1 Գործի քննությունը արբիտրաժային տրիբունալի որոշմամբ բանավոր լուծմանը հիման վրա անցկացնելու դեպքում հայցադիմումի պատասխանը կամ հակընդդեմ հայցադիմում ներկայացվելու դեպքում հակընդդեմ հայցադիմումի պատասխանը ֆինանսական արբիտրաժի կողմից ստանալուց կամ հայցադիմումի պատասխանի կամ հակընդդեմ հայցադիմումի պատասխանի ներկայացման համար Կանոնակարգով սահմանված ժամկետը լրանալուց հետո անց են կացվում բանավոր լուծմանը:

19.2 Բանավոր քննության առաջին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին կողմերը տեղեկանում են ծանուցագրերով, որոնք կողմերին պետք է ուղարկվեն այնպիսի հաշվարկով, որ յուրաքանչյուր կողմը, ծանուցագիրը ստանալուց հետո, իր տնօրինության տակ ունենա ոչ պակաս հինգ օր՝ բանավոր լուծմանը պատրաստվելու և ներկայանալու համար: Կողմերի համաձայնությամբ այդ ժամկետը կարող է կրճատվել:

19.3 Գործի քննությունն անց է կացվում դռնփակ: Արբիտրաժային տրիբունալի թույլտվությամբ և կողմերի համաձայնությամբ գործի քննությանը կարող են ներկա գտնվել արբիտրաժային վարույթին չմասնակցող անձինք:

19.4 Եթե արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրներից մեկը փոխարինվում է, ապա նոր ձևավորված արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում, թե անհրաժեշտ է արդյոք կրկնել նախորդ նիստերը և եթե անհրաժեշտ է, ապա՝ ամբողջությամբ, թե մասամբ:

19.5 Հետագա բանավոր քննության նիստերի անցկացման անհրաժեշտության դեպքում դրանց անցկացման ժամկետը նշանակվում է արբիտրաժային տրիբունալի կողմից՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, որի վերաբերյալ կողմերը ծանուցվում են տեղում՝ համապատասխան ստորագրությամբ, կամ Կանոնակարգով սահմանված կարգով:

20. Բանավոր քննության նիստի արձանագրումը

20.1 Բանավոր քննության նիստ անցկացնելիս վարվում է արձանագրություն:

20.2 Բանավոր քննության նիստի արձանագրությունը վարվում է գրավոր կամ ձայնագրման միջոցով:

20.3 Բանավոր քննության նիստի արձանագրությունը գործի նյութերին կցվում է նախագահող արբիտրի և արձանագրությունը կազմող անձի ստորագրությամբ: Համակարգչի միջոցով կատարված արձանագրությունը գործի նյութերին կարող է կցվել նաև լազերային կրիչի տեսքով:

21. Բանավոր քննության արձանագրությունը

21.1 Գործի բանավոր քննության վերաբերյալ Կանոնակարգի 20 գլխով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի. ֆինանսական արբիտրաժի անվանումը, գործի համարը, քննության վայրը և ամսաթիվը, կողմերի անունները (անվանումները), տեղեկություններ գործի քննությանը կողմերի ներկայացուցիչների մասնակցության մասին, արբիտրների, վկաների, փորձագետների, թարգմանիչների և քննության այլ մասնակիցների անուններն ու ազգանունները, քննության ընթացքի կրճատ նկարագրումը, կողմերի պահանջները և կողմերի այլ կարևոր հայտարարությունների շարադրումը, նշումներ գործի քննության հետաձգման կամ ավարտման հիմքերի վերաբերյալ, արբիտրների ստորագրությունները:

21.2 Կողմերն իրավունք ունեն ծանոթանալ արձանագրության բովանդակությանը:

21.3 Կողմի միջնորդությամբ արբիտրաժային տրիբունալի որոշմամբ արձանագրության մեջ կարող են մտցվել փոփոխություններ կամ լրացումներ, եթե կողմի միջնորդությունը համարվի հիմնավոր:
21.4 Իր խնդրանքով կողմը ստանում է արձանագրության պատճենը:

22. Գործի վարույթը գրավոր նյութերի հիման վրա

22.1 Կողմերը կարող են պայմանավորվել վեճը միայն գրավոր նյութերի հիման վրա քննելու վերաբերյալ, առանց բանավոր քննության անցկացման: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, գործի վարույթը կարող է իրականացվել միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա նաև արբիտրաժային տրիբունալի համապատասխան որոշմամբ:
22.2 Արբիտրաժային տրիբունալը կարող է իր հայեցողությամբ նշանակել նաև բանավոր լսումներ, եթե ներկայացված նյութերը բավարար չեն վեճն ըստ էության լուծելու համար:

23. Կողմերի մասնակցությունը

23.1 Կողմերը կարող են իրենց գործերը վարել անմիջականորեն (անձամբ) կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով:
23.2 Գործի քննության ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված կողմի չներկայանալն արգելք չէ վարույթի իրականացման և գործով վճռի կայացման համար, բացառությամբ, երբ չներկայացած կողմը գրավոր ձևով ներկայացրել է միջնորդություն հարգելի պատճառով գործի քննությունը հետաձգելու համար:
23.3 Կողմը կարող է պատշաճ ձևակերպված գրավոր միջնորդություն ներկայացնել գործն իր բացակայությամբ՝ գործում առկա փաստաթղթերի հիման վրա քննելու վերաբերյալ:

24. Հայցի ապահովման միջոցները

24.1 Արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք նա գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան:
24.2 Արբիտրաժային տրիբունալը կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող ապահովում՝ հայցի ապահովման միջոցների կիրառմամբ մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասների կանխման կամ հատուցման նպատակով:
24.3 Արբիտրաժային տրիբունալը կարող է կողմի միջնորդությամբ վերացնել իր կողմից կիրառված հայցի ապահովման միջոցները:
24.4 Կանոնակարգի 24.1 և 24.3 կետերում նախատեսված որոշումներն ամրագրվում են միջանկյալ վճիռների ձևով:
24.5 Հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին արբիտրաժային տրիբունալի միջանկյալ վճիռը Պատասխանողին ուղարկվում (հանձնվում) է այդ միջանկյալ վճռի կատարումից հետո:

25. Ապացույցները

25.1 Կողմերը պարտավոր են ապացուցել իրենց պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:
25.2 Արբիտրաժային տրիբունալը կարող է կողմերից պահանջել ներկայացնել նաև այլ ապացույցներ:
25.3 Արբիտրաժային տրիբունալն իրավասու է նաև իր հայեցողությամբ փորձաքննություն նշանակել և դիմել երրորդ անձանց՝ ապացույցներ ներկայացնելու համար, ինչպես նաև հրավիրել և լսել վկաների:
25.4 Կողմը պարտավոր է ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրա պատշաճ վավերացված պատճենները:
25.5 Գործի քննության շահերից ելնելով արբիտրաժային տրիբունալն իրավասու է պահանջել նշված ապացույցների թարգմանությունն այլ լեզվով:
25.6 Ապացույցների ստուգումը (ուսումնասիրությունը, զննումը) իրականացվում է արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված եղանակով:

25.7 Ապացույցների գնահատումը արբիտրների կողմից իրականացվում է իրենց ներքին համոզմամբ:

25.8 Կողմի՝ անհրաժեշտ ապացույցներ չտրամադրելը չի խոչընդոտում արբիտրաժային տրիբունալին շարունակել վարույթը և վճիռ կայացնել իր տրամադրության տակ եղած ապացույցների հիման վրա:

26. Երրորդ անձանց մասնակցությունը

26.1 Երրորդ անձի ներգրավումը արբիտրաժային վարույթին թույլատրվում է միայն վիճող կողմերի միջնորդությամբ:

26.2 Երրորդ անձին վարույթ ներգրավելու համար, կողմերի համաձայնությունից բացի, պահանջվում է նաև ներգրավող անձի համաձայնությունը:

26.3 Երրորդ անձին ներգրավելու համաձայնությունը պետք է կայացվի գրավոր:

27. Քննության հետաձգումը և վարույթի կասեցումը

27.1 Անհրաժեշտության դեպքում, կողմերի գրավոր համաձայնությամբ, գործի քննությունը կարող է հետաձգվել կամ վարույթը կարող է կասեցվել:

27.2 Գործի քննության հետաձգման կամ արբիտրաժային վարույթի կասեցման վերաբերյալ կայացվում է որոշում:

28. Արբիտրաժային վճիռ

28.1 Արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է կայացվի գրավոր:

28.2 Վճիռը կայացվում է որոշակի խորհրդակցությամբ՝ արբիտրաժային տրիբունալի ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ միանձնյա արբիտրի կողմից գործի քննության դեպքում՝ վճիռը կայացվում է վերջինիս կողմից միանձնյա: Արբիտրներն իրավունք չունեն ձեռնպահ մնալու քվեարկությունից: Եթե վճիռը հնարավոր չէ կայացնել ձայների պարզ մեծամասնությամբ, ապա այն կայացվում է արբիտրաժային տրիբունալը նախագահողի կողմից:

28.3 Արբիտրաժային վճիռը ստորագրվում է արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների կողմից: Արբիտրը, որը համաձայն չէ վճռի հետ, կարող է գրավոր կերպով ներկայացնել իր հատուկ կարծիքը, որը կցվում է վճռին:

29. Վճռի հրապարակումը

29.1 Գործի գրավոր և/կամ բանավոր քննության ավարտից հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է արբիտրաժային տրիբունալի վճիռը:

29.2 Արբիտրաժային տրիբունալի վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո հանձնվում է կողմերին, իսկ նրանց բացակայության դեպքում մեկօրյա ժամկետում ուղարկվում է վերջիններիս:

29.3 Արբիտրաժային տրիբունալը կարող է անցկացնել լրացուցիչ քննություն, եթե դա բխում է վճռի ճիշտ լուծման շահերից և վճիռը դեռևս չի հրապարակվել:

29.4 Արբիտրաժային տրիբունալն անհրաժեշտության դեպքում մինչև տասը օրով կարող է երկարացնել Կանոնակարգի 29.1 կետով սահմանված ժամկետը:

30. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը

30.1 Վճիռը պետք է կայացվի գրավոր: Վճռում պետք է նշվի.

- Ֆինանսական արբիտրաժի անվանումը,
- գործի համարը,
- վճռի կայացման ամսաթիվը և վայրը,
- արբիտրների անունները և ազգանունները,
- վիճող կողմերի և արբիտրաժի վարույթին մասնակցող այլ անձանց անվանումները,
- վճռի առարկան և գործի հանգամանքների կրճատ նկարագրությունը և պատճառաբանությունները, որոնց վրա հիմնված է վճիռը, բացառությամբ, երբ կողմերը

համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ,

- հայցային պահանջների բավարարման կամ մերժման եզրահանգումները,
- գործով արբիտրաժային ծախսերի գումարների բաշխումը կողմերի միջև,
- արբիտրների ստորագրությունները:

30.2 Արբիտրաժային վճիռը պետք է ստորագրվի տրիբունալի բոլոր անդամների կողմից: Եթե արբիտրներից որևէ մեկը չի կարողանում ստորագրել արբիտրաժային վճիռը՝ արբիտրաժային տրիբունալը նախագահողը վավերացնում է այն իր ստորագրությամբ՝ նշելով արբիտրի ստորագրության բացակայության պատճառները:

31. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը

31.1 Ցանկացած կողմ, տեղեկացնելով մյուսին, կարող է արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին՝ խնդրելով ուղղել վճռում առկա տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ գրասխալները կամ նմանաբնույթ այլ սխալները .

31.2 Արբիտրաժային տրիբունալը կողմի դիմումը հիմնավոր գտնելու դեպքում այն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կատարում է համապատասխան ուղղումներ կամ տալիս պարզաբանումներ, որոնք դառնում են վճռի բաղկացուցիչ մաս:

31.3 Արբիտրաժային տրիբունալի վճռում ուղղումներ կարող են կատարվել նաև արբիտրաժային տրիբունալի կողմից սեփական նախաձեռնությամբ մինչև վճռի կատարումը՝ վճռի կայացման օրվանից երեսունօրյա ժամկետում:

31.4 Կողմերից յուրաքանչյուրը, տեղեկացնելով մյուս կողմին, արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կարող է դիմել արբիտրաժային տրիբունալին՝ վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստացումից հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը:

31.5 Կողմերից յուրաքանչյուրը, մյուս կողմին տեղյակ պահելով, կարող է արբիտրաժային վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնելու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսուներկու օրյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ:

31.6 Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել Կանոնակարգի 31-րդ գլխում նշված ժամկետները:

31.7 Վճիռների ուղղումները և պարզաբանումները, ինչպես նաև լրացուցիչ վճիռը հանդիսանում են արբիտրաժային վճռի բաղկացուցիչ մաս:

32. Հաշտության համաձայնություն

32.1 Եթե արբիտրաժային վարույթի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային տրիբունալը առարկությունների բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններում կայացնում է վճիռ՝ հաստատելով կողմերի կնքած հաշտության համաձայնությունը: Ընդ որում, արբիտրաժային տրիբունալը կողմերին պարզաբանում է հաշտության համաձայնության իրավական հետևանքները:

32.2 Կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում, արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը :

32.3 Կողմերի կնքած հաշտության համաձայնության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի վճիռը ունի նույն կարգավիճակը և ուժը, ինչպես արբիտրաժային տրիբունալի կողմից ըստ գործի էության կայացվող ցանկացած այլ վճիռ:

33. Վճռի կատարումը

33.1 Արբիտրաժային տրիբունալի վճիռները պարտադիր են կողմերի համար և ենթական չեն բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33.2 Արբիտրաժային տրիբունալի վճիռները կատարում են կամավոր՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է անհապաղ կատարման:

33.3 Արբիտրաժային տրիբունալի վճռում նշված ժամկետում կամավոր չկատարված վճիռները ի կատար են ածվում հարկադիր կարգով՝ Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

34. Արբիտրաժի ավարտը

34.1 Արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացմամբ:

34.2 Արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումը կայացվում է.

34.2.1 հայցվորի կողմից հայցից (պահանջից) հրաժարվելու դեպքում, բացառությամբ եթե պատասխանողն այդ մասին ծանուցում ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում առարկում է գործի վարույթի ավարտման դեմ և Ֆինանսական արբիտրաժը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը ճանաչում է պատասխանողի օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում,

34.2.2 կողմերի միջև արբիտրաժային վարույթի դադարեցման վերաբերյալ պայմանավորվածության դեպքում,

34.2.3 Ֆինանսական արբիտրաժը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ վարույթի շարունակումը ինչ-ինչ պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին, մասնավորապես, երբ բացակայում են գործի քննության և վեճն ըստ էության լուծելու համար անհրաժեշտ նախադրյալները:

34.3 Արբիտրաժային վարույթի դադարեցման դեպքերում արբիտրաժային ծախսերի վճարումները և դրանց հետ վերադարձը կատարվում են Կանոնակարգի թիվ 1 հավելվածով սահմանված կարգով:

34.4 Արբիտրաժային վարույթն ավարտելու մասին որոշումը կայացնում է Ֆինանսական արբիտրաժը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը:

ԿԱՐԳ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԱՐ

1.1 Ֆինանսական արբիտրաժը սկսված յուրաքանչյուր գործով գանձում է արբիտրաժային վճար: Արբիտրաժային վճարը գանձվում է արբիտրաժային գործի քննության համար:

1.2 Արբիտրաժային վճարը ծախսվում է Ֆինանսական արբիտրաժի գործունեության հետ կապված ընդհանուր ծախսերը՝ արբիտրներին տրվող հոնորարները և վարչական ծախսերը (աշխատակազմի աշխատակիցներին տրվող աշխատավարձեր եւ այլ ծախսեր) կատարելու համար: Արբիտրներին տրվող հոնորարների գումարը կազմում է արբիտրաժային վճարի 50%-ը:

1.3 Արբիտրաժային տրիբունալի արբիտրների միջև հոնորարի ընդհանուր գումարը բաշխվում է հետևյալ համամասնությամբ՝ արբիտրաժային տրիբունալի նախագահողին՝ 40%, մնացած գումարը բաշխվում է արբիտրաժային տրիբունալի կազմում ընդգրկված մյուս արբիտրների միջև հավասարաչափ:

Վեճը միանձնյա քննելու դեպքում արբիտրաժային տրիբունալի նախագահողին վճարվում է հոնորարի ամբողջ գումարը:

Արբիտրներին հոնորարները վճարվում են օրենքով սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները կատարելուց հետո:

2. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ

2.1 Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերն այն ծախսերն են, որոնք կապված են գործերի քննության կազմակերպման հետ (փորձաքննությունների անցկացման, փաստաթղթերի և գործի այլ նյութերի թարգմանության ծախսեր, փորձագետներին, թարգմանիչներին վճարման ենթակա գումարներ, գործուղման ծախսեր, անհրաժեշտության դեպքերում ապացույցները տեղում զննելու համար, տրանսպորտային ծախսեր և այլն):

2.2 Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը կատարվում են այն Կողմի հաշվին, որի միջնորդությամբ կատարվում են այդ ծախսերը:

3. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Արբիտրաժային վճարը գանձվում է ՀՀ դրամով՝ հայցագնի 2 %-ի չափով, բայց ոչ պակաս 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամից և ոչ ավել 500 000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամից:

3.2 Ոչ գույքային պահանջներով արբիտրաժային վճարը գանձվում է 50 000 ՀՀ դրամ գումարով:

3.3 Արբիտրաժային վճարը հայցվորի կողմից վճարվում է «Արցախբանկ» ՓԲԸ-ում ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի թիվ 22317602541700 հաշվի համարին:

3.4 Արբիտրաժային վճարների փոխանցման հետ կապված բանկային միջնորդավճարները վճարվում են վճարումը կատարող կողմի հաշվին:

3.5 Հայցային պահանջներն ավելացնելու դեպքում հայցվորը պարտավոր է հայցային պահանջներն ավելացնելու վերաբերյալ դիմումին կցել հայցապահանջների ավելացված մասին համապատասխանող արբիտրաժային վճարի վճարման անդորրագիրը:

3.6 Հակընդդեմ հայցի նկատմամբ կիրառվում են հայցի վերաբերյալ կանոնները:

4. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԳԱՐՉ

4.1. Եթե մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործը վարույթ ընդունելը հայցվորը հրաժարվում է հայցից կամ կողմերը պայմանավորվում են արբիտրաժային վարույթի դադարեցման վերաբերյալ, ապա արբիտրաժային վճարի գումարի 100%-ը վերադարձվում է:

4.2. Եթե արբիտրաժային վարույթն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո՝ առանց վճռի կայացման, ապա արբիտրաժային վճարի գումարի 50%-ը վերադարձվում է:

4.3. Հայցային պահանջների չափը նվազեցնելու դեպքում վճարված արբիտրաժային վճարի՝ հայցային պահանջների նվազեցված մասին համապատասխանող մասը վերադարձվում է:

4.4 Արբիտրաժային վճարի վերադարձման մասին պետք է ամրագրվի արբիտրաժային վարույթն ավարտելու մասին որոշման կամ արբիտրաժային վճռի մեջ:

4.5. Հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները՝ Ֆինանսական արբիտրաժը կարող է որոշում կայացնել սույն գլխում նախատեսված վերադարձման ենթակա արբիտրաժային վճարի չափերը փոփոխելու մասին:

4.6 Եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել, ապա արբիտրաժային ծախսերը կողմերի միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

4.7 Արբիտրաժային վճարի կամ գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերի կատարման կապակցությամբ առաջացած ցանկացած վեճ լուծում է Ֆինանսական արբիտրաժը կամ արբիտրաժային տրիբունալը, եթե վերջինս արդեն ձևավորված է: